2-րդ ԴԱՍԱՐԱՆ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ԹԵՄԱ 5-6

Բնությունը մեր շուրջը

Ուսուցչի նյութերի փաթեթ

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

ԹԵՄԱ 5-6. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՇՈՒՐՋԸ

«Կայտա՛ռ պատանի, աշխու՛յժ աղջիկ, սիրի՛ր բնությունը: Հետևի՛ր բնության դպրոցին: Բաց արա միտքդ ու կարդա նրա դասագիրքը: Բա՛ց սիրտդ, և թող այնտեղ արձագանքեն բնության գաղտնի ձայները: Կարդա՛ բնության գիրքը, որ կարելի չէ ոչ մի բանով գրել և ոչ մի գույնով ներկել: Բնության մեջ կյանք կա, ամեն ինչ շարժվում է ու փոփոխվում: Բնությունը նման է արշալույսին՝ մի՛շտ թարմ, մի՛շտ նոր. նա թե՛ ծնող է, և թե՛ ձեզ պես մանուկների նման միշտ մանուկ է նաև: Կայտա՛ռ պատանի, աշխու՛յժ աղջիկ, սիրի՛ր բնությունը»:

Կոմիտաս Վարդապետ

ԴԱՍ 1 (33) - ԿԵՆԴԱՆԻ և ԱՆԿԵՆԴԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակը – Օգնել տարբերակելու կենդանի և անկենդան բնության, մարդու և բնության ստեղծած օբյեկտները՝ նկարագրելով դրանց առանձնահատկությունները: Օգնել հասկանալու, որ կենդանի բնությունը ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի կարիք ունի, որ անկենդան բնությունը կարող է կենդանիների, բույսերի, մարդու համար բնակության միջավայր լինել, բացատրել, որ տվյալ միջավայրը ապահովում է կենդանի բնության տարրերի կենսական պահանջները:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Օ1 Նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր:

2Շ.Բ.Բ.Օ1գ Նկարագրել բնության անկենդան և կենդանի օբյեկտները, կարողանալ տարբերակել դրանք՝ ելնելով դրանց առանձնահատկություններից:

2Շ.Բ.Բ.Օ1ա Համեմատել և տարբերակել շրջապատի՝ մարդու և բնության ստեղծած օբյեկտները:

Ընթացքը

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-րդ դասարանի գործող դասագրքերի՝
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1

թեմա 6, **դաս** 1, **էջ** 52-59-**ի նյութերը՝**

« Ես և շրջակա աշխարհը» Ա.Հովսեփյան, Ա.Կարապետյան, Ն.Տողանյան և այլք

Դաս 12, **էջ** 44-47

1. Ուսուցիչը դասը սկսում է՝ աշակերտներին խնդրելով նայել շուրջը և թվարկել այն ամենը, ինչ իրենք տեսնում են: Երբ աշակերտները թվարկում են, ուսուցիչը կարող է դրանք գրառել գրատախտակին, որպեսզի հետո աշակերտները կարողանան իրենց իսկ թվարկածը դասակարգել, տարբերակել:
2. Այնուհետև առաջարկում է նայել նկարներին՝ տարբերակելով մարդու ստեղծածը բնության ստեղծածից: Որից հետո հարցադրումներով փորձում է պարզել՝ աշակերտները հեշտությա՞մբ կատարեցին առաջադրանքը, թե ինչ-որ պատկերի հարցում դժվարացան: Կարևոր է, որ նրանք կարողանան ազատ արտահայտվել, ճիշտ կողնորոշվել: Այս աշխատանքը կատարելուց հետո ուսուցիչն առաջարկում է կարդալ էջում զետեղված փոքրիկ բացատրությունը բնության կենդանի և անկենդան տարրերի մասին:
3. Հաջորդ առաջադրանքը աշակերտները կատարում են խմբով՝ նայելով նկարներին և տարբերակելով կենդանի և անկենդան բնության տարրերը: Կարևոր է, որ երեխաները տարբերակում կատարելիս անպայման առաջնորդվեն ըստ բնորոշիչ առանձնահատկությունների (անկենդան բնությունը չի ապրում կամ մեռնում, իսկ կենդանի բնությունն ապրում է, բազմանում և մեռնում): Անդրադարձ կատարել «**Օրինաչափություններ**» խաչվող հասկացությանը: Առաջադրանքը կատարելուց հետո առաջադրվում են հարցեր, որոնք կօգնեն աշակերտներին հասկանալու, թե ինչ է անհրաժեշտ բույսերին, կենդանիներին, մարդկանց ապրելու համար: Կարելի է փորձի միջոցով ցույց տալ ջրի, լույսի դերը բույսերի աճի համար[1]:
   Աշխատանքն ամփոփելու համար դարձյալ պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել փոքրիկ տեքստի վրա, որի միջոցով երեխաները կհասկանան, թե ինչ է անհրաժեշտ մարդկանց, բույսերի և կենդանիների ապրելու համար:
   4. Ուսուցիչն առաջարկում է նայել նկարները, մեկնաբանել, թե ինչի մասին են պատմում դրանք: Կարևոր է, որ երեխաները հասկանան՝ անկենդան բնությունը նաև կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայրն է, այդ միջավայրն ապահովում է բնակության համար անհրաժեշտ պայմանները:
   Դասի ընթացքում պետք է անդրադարձ կատարել նաև «**Պատճառ և հետևանք**» **խաչվող հասկացությանը**:
   5. Տնային աշխատանք:
   6. Ձևավորող գնահատում:

[1] «Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1, էջ 57:

ԴԱՍ 2 (34) - ԲՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակը – Օգնել, որ աշակերտները համոզվեն՝ կենդանի բնությունը ջրի, լույսի, ջերմության և բնակության վայրի կարիք ունի: Նպաստել, որ աշակերտները կարողանան հասկանալ բույսերի և կենդանիների փոխկախվածությունը, բերեն սննդային շղթաների պարզ օրինակներ:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Օ2 Դիտարկել և փորձերի օգնությամբ համոզվել, որ կենդանի բնությունը ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի կարիք ունի:

2Շ.Բ.Բ.Կ4 Դիտարկել, նկարագրել բույսերի և կենդանիների փոխկախվածությունը, սննդային շղթաների պարզ օրինակներ բերել:

Ընթացքը

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-**րդ դասարանի գործող դասագրքերի՝**
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1
թեմա 6, **դաս** 1, **էջ** 56-59 **նյութերը**

- Ուսուցիչը դասը սկսում է հարցերով՝ պարզելով, թե աշակերտները գիտեն արդյոք՝ ինչ է անհրաժեշտ բույսերին, կենդանիներին, մարդկանց: Աշակերտները թվում են իրենց իմացածը մտագրոհով, ուսուցիչը գրի է առնում գրատախտակին, որպեսզի դասի վերջում նորից անդրադարձ կատարի:

1. Այս առաջադրանքը կատարելու համար, ուսուցիչն առաջարկում է գնալ դպրոցի բակ, աշակերտների ուշադրությունը հրավիրում է նախապես մշակված հարցաշարի վրա, որի օգնությամբ ուղղորդում է դիտարկումներ կատարել և համոզվել, որ կենդանի բնությունը կարիք ունի արևի, լույսի, ջերմության: Կարևոր է, որ աշակերտները համոզվեն դրանում՝ տեսնելով նաև անտեսանելի կապերը: Անդրադարձ «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացությանը՝ ցույց տալով ինչի պատճառով ինչ կարող է լինել:
   Այնուհետև առաջարկում է կարդալ փոքրիկ բացատրությունն այն մասին, թե ինչ է անհրաժեշտ բույսերին, կենդանիներին և մարդկանց սնվելու, շնչելու, աճելու, բազմանալու, շարժվելու համար: Կարևոր է, որ ուսուցիչը ներկայացնի նաև բույսերի դերը, կարևորությունը թթվածնի ստեղծման համար:
2. Հաջորդ առաջադրանքը կատարելու համար ուսուցիչն առաջարկում է ուշադիր նայել նկարը և բացատրել, թե բնության մեջ անկենդան և կենդանի բնության

տարրերն ինչպես են իրար հետ կապված: Դարձյալ անդրադարձ է կատարում անտեսանելի կապերին:

3. Այս առաջադրանքը կատարելով՝ աշակերտներն իմանում են սննդային շղթայի մասին: Ուսուցիչը նկարի օրինակներով ցույց է տալիս՝ մեկնաբանելով, թե բնության մեջ ինչն ինչով կարող է սնվել: Այնուհետև առաջարկում է ինքնուրույն կազմել և բերել նման օրինակներ:
4. Հաջորդ առաջադրանքի նպատակն է ամրապնդել սովորածը: Ուսուցիչն առաջարկում է նկարների համարները դասավորել հաջորդաբար՝ կազմելով սննդային շղթա: Անդրադարձ «**Օրինաչափություններ**» (բնության տարբեր բաղադրիչները փոխկապված են, դրանցից մեկի արտամղումը կարող է փոփոխել ողջ համակարգը), «**Էներգիա և նյութ**» (պարզ սննդային շղթաների միջոցով տարրական պատկերացում տալ, որ սնունդը եռանդ է տալիս, եթե կենդանիները, մարդիկ, բույսերը չսնվեն, չեն կարող ապրել) խաչվող հասկացություններին:
5. Տնային հանձնարարություն:
6. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 3 (35) - ՄԱՐԴԸ և ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակը – Օգնել, որ աշակերտները հասկանան, թե ինչ դրական և բացասական ազդեցություն ունի մարդը բնության վրա, թե մարդն ինչ կարող է ստանալ բնությունից՝ սնունդ, շինանյութ, դեղաբույսեր, գեղագիտական նշանակության իրեր:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Օ1բ ***Ներկայացնել, թե մարդն ինչ է ստանում բնությունից (սնունդ, շինանյութ, դեղաբույսեր, գեղագիտական նշանակություն և այլն)****:*

Ընթացքը

«**Ես և շրջակա աշխարհը**» **առարկայի** 2-**րդ դասարանի գործող դասագրքերի՝**
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1
թեմա 6, **դաս** 5, **էջ** 69 **–** 71-**ի նյութերը**

1. Դասի այս հատվածը կարելի է վարել և՛ դասասենյակում, և՛ բակում: Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է նայել շուրջը և թվել այն առարկաները, որոնք տեսնում են իրենց շուրջը: Հետո հարցերի միջոցով քննարկում է կազմակերպում, թե ով է ստեղծել դրանք, ինչի համար են, ինչ կլիներ, եթե դրանք չլինեին: Կարևոր է, որ երեխաները տեսնեն նաև շրջապատի բույսերը, ծաղիկները, ծառերը, թռչունները: Անդրադարձ «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացությանը:
2. Այնուհետև, ուսուցիչը հանձնարարում է նայել նկարներին և խմբավորել՝ երկու խումբ ստեղծելով: Աշակերտները վերջացնելուց հետո ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները: Պպետք է հարցնել, թե ինչու են այդպես խմբավորել, ինչ են հաշվի առել: Կարևոր է, որ երեխաները կարողանան մեկնաբանել իրենց կատարած աշխատանքը, հիմնավորել, թե որ խումբն է իրենց դուր գալիս, որը՝ ոչ, ինչո՞ւ:
   Երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել էջում ներկայացված փոքրիկ բացատրության վրա, հետո խնդրել, որ նրանք կարողանան թվել, թե էլ ինչ վնասներ է հասցնում մարդը բնությանը: Շատ կարևոր է, որ երեխաները հասկանան ամենակարևորը՝ բնության բարիքներն անսպառ չեն, ուստի պետք է լինել հոգատար և խնայող (**Ֆինանսական կրթության բաղադրիչի ինտեգրում՝ «Խնայողություն»**):

3. Հաջորդ առաջադրանքով ուսուցիչը պետք է օգնի աշակերտներին նկատել, որ մարդը միշտ հիացել է բնությամբ, տարբեր երգեր, գեղարվեստական ստեղծագործություններ, երաժշտություններ, նկարներ, քանդակներ ստեղծել՝ գովերգելով բնության գեղեցկությունը: Կարելի է ունկնդրել երաժշտություն, վերհիշել անցած ստեղծագործություններ, նայել նկարներ, դիտել հետաքրքիր աշխատանքներ: Օրինակ՝
   https://www.youtube.com/watch?v=GRxofEmo3HA&t=5s
   https://www.youtube.com/watch?v=wUTpHx5keIA
4. Այս առաջադրանքը ստեղծագործական բնույթի է, կարելի հանձնարարել կատարել և՛ խմբով, և՛ անհատական:
5. Տնային աշխատանք[2]:

[2] Ալեքսանյան Լ. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի գնահատումը. թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ հարցաշարերի շտեմարան 2-4-րդ դասարանների համար:

ԴԱՍ 4 (36) - ԲՈՒՅՍԵՐ

Նպատակը – Օգնել, որ սովորողները պատկերացում կազմեն մարմիններ հասկացության մասին, կարողանան նկարագրել, բնութագրել կենդանի բնության և անկենդան բնության մարմինները՝ նշելով, թե ինչով են միմյանցից տարբերվում:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Օ1դ Նկարագրել, բնութագրել կենդանի բնության տարրերը, ինչով են տարբերվում անկենդան բնությունից:

2Շ.Բ.Բ.Կ1 Դիտարկել բույսերի բազմազանությունը. խմբավորել դրանք մշակովի և վայրի, ծաղկող և չծաղկող, ցամաքային և ջրային, ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլ դասակարգումներով, բերել օրինակներ:

Ընթացքը

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-**րդ դասարանի գործող դասագրքերի՝**
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1
թեմա 6, **դաս** 3, **էջ** 60 – 62-**ի նյութերը**

Դասը սկսել մտքերի տարափով՝ պարզելով, թե երեխաները ինչ են հասկանում, երբ ասում ենք մարմիններ: Կարծիքները կարող են տարբեր լինել: Պետք է լսել կամ գրառել բոլորի ասածները: Շատ կարևոր է, որ երեխաները սովորեն նոր հասկացությունները ճիշտ օգտագործել, որովհետև դա նրանց կօգնի հետագայում «Մարմիններ, նյութեր, մասնիկներ» թեման սովորելիս: Առհասարակ ուսուցիչը պետք է հետևողական լինի այս թեմայի բոլոր հասկացությունների, եզրույթների նկատմամբ՝ ձևավորելով համապատասխան բառապաշար, նպաստելով «Բնագիտություն», «Կենսաբանություն» առարկաների հետագա ուսուցմանը:

1. Հաջորդ առաջադրանքը կատարելիս կարելի է երեխաներին տանել բակ, որպեսզի հետազոտեն, թե ինչ բույսեր կան շրջապատում: Կարելի է այս պահին նորից վերհիշել կենդանի բնության բնորոշիչ հատկանիշները՝ դիտարկելով բույսերը՝ որպես կենդանի բնության մարմիններ: Աշխատանքի համար պետք է նախատեսել որոշակի ժամանակ հաջորդ առաջադրանքները կատարելու համար: Տեղին և ժամանակին է նաև ցույց տալ բույսերի մասերը՝ բացատրելով, թե տերևն ինչի համար է, արմատը՝ ինչի և այլն:

2. Վերադառնալով դասարան՝ ուսուցիչը խնդրում է, որ աշակերտները կարդան այն բացատրությունը, որ կա դասագրքում՝ (**«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս**1 **էջ** 69-71, բացատրել **դեղաբույս** բառը, միջառարկայական կապ **Մայրենի** առարկայի հետ՝ «Բարդ բառեր»):
3. Այս առաջադրանքը նպաստում է, որ երեխաները սովորեն բույսերի կառուցվածքը: Բացի նկարից, աշակերտներին կարելի ցույց տալ նաև որևէ սենյակային բույս՝ արմատակալած: Անդրադարձ «**Կառուցվածք և գործառույթ**» խաչվող հասկացությանը:
4. Տնային աշխատանք:
5. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 5 (37) - ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակը – Օգնել, որ աշակերտները պատկերացում ունենան բույսերի բազմազանության մասին, կարողանան խմբավորել դրանք մշակովի և վայրի, ծառեր, թփեր, խոտաբույսեր, ծաղկող և չծաղկող դասակարգումներով:

Վերջնարդյունքներ

*2Շ.Բ.Բ.Կ1 **Դիտարկել բույսերի բազմազանությունը. խմբավորել դրանք մշակովի և վայրի, ծաղկող և չծաղկող, ցամաքային և ջրային, ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլ դասակարգումներով, բերել օրինակներ:***

Ընթացքը

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-րդ դասարանի գործող դասագրքերի՝
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1
***թեմա** 6, **դաս** 3, **էջ** 63 – 68-**ի նյութերը**:*

1. Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի, տալիս է քարտեր և հանձնարարում խմբավորել նկարները: Աշխատանքի ընթացքում կարող է շրջել, որոշ խթանիչ հարցերով ուղղորդել: Աշխատանքն ավարտելուց հետո հարցերով փորձում է պարզել, թե աշակերտներն ինչպես են խմբավորել, ինչ նմանություններ կամ տարբերություններ են նկատել:
2. Հետո առաջարկում է կարդալ փոքրիկ բացատրություն բույսերի բազմազանության մասին: Կարևոր է, որ երեխաները հասկանան այն բնութագրիչ տարբերությունները, որոնցով բույսերը տարբերվում են միմյանցից:
3. Այս առաջադրանքը կատարելուց առաջ պետք հարցնել, թե երեխաներն ինչ ծառատեսակներ գիտեն: Նրանք անպայման սկզբում կնշեն մրգատու ծառերը: Կարելի է նաև ուշադրություն դարձնել պտուղ-ծառ անվանումներին՝ դեղձ – դեղձենի (միջառարկայական կապ **Մայրենիի** հետ՝ «Աճանցավոր բառեր»): Կարևոր է, որ նրանք իմանան՝ ինչ է անտառը (ներառարկայական կապ՝ **ձևավորել ճանաչողություն երկրի մակերևույթի որոշ ձևերի մասին**):
4. Հաջորդ առաջադրանքը վայրի և մշակովի բույսերի մասին է: Սովորողները նկարների և փոքրիկ բացատրության միջոցով կկարողանան տարբերել մշակովի և վայրի բույսերը: Կարևոր է, որ նրանք տարբերությունից բացի, կրկնեն և ամրապնդեն բույսերի կառուցվածքը (անդրադարձ «**Կառուցվածք և**

գործառույթ» խաչվող հասկացությանը), ինչպես նաև՝ իմանան, թե ինչ է մարդը ստանում բույսերից:

5. Դասի այս հատվածն ուսումնասիրելիս ուսուցիչն անդրադարձ է կատարում նաև «Առողջ սնունդ» ներառարկայական կապին՝ խոսելով մարդու օրգանիզմին անհրաժեշտ վիտամինների մասին:
6. Հաջորդ առաջադրանքը սենյակային բույսերի մասին է: Ուսուցիչը նախ հարցերով պետք է պարզի, թե ինչ գիտեն երեխաները սենյակային բույսերի մասին: Կարևոր է, որ երեխաները հասկանան՝ սենյակային բույսերը նույնպես հատուկ խնամքի կարիք ունեն, դրանց լավ աճի համար նույնպես անհրաժեշտ են լույս, ջերմություն, ջուր:
7. Տնային աշխատանք:
8. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 6 (38) - ՎԱՅՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Նպատակը – Օգնել, որ աշակերտները ճանաչեն կենդանիների խմբերը՝ իրենց բնութագրիչ հատկանիշներով: Նպաստել, որ սովորողները կարողանան տարբերակել վայրի և ընտանի կենդանիները:

Վերջնարդյունքներ

*2Շ.Բ.Բ.Կ1ա **Խմբավորել կենդանիները՝ ըստ վայրի և ընտանի տեսակների**:*

Ընթացքը

«***Ես և շրջակա աշխարհը» առարկայի** 2-**րդ դասարանի գործող դասագրքերի՝***
***«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս**1,*
թեմա** 6, **դաս** 7, **դաս** 12, **էջ** 99 –102-**ի նյութերը

***«Ես և շրջակա աշխարհը» Ա. Հովսեփյան, Ա. Կարապետյան, Ն. Տողանյան և այլք մաս** 1,*
***դաս** 19, **դաս** 20, **էջ** 74 -81:*

Ուսուցիչը դասը սկսում է հարցերով՝ պարզելով, թե ի՞նչ կենդանիներ գիտեն երեխաները, ի՞նչ գիտեն դրանց մասին:

1. Այնուհետև սովորողների ուշադրությունը հրավիրում է նկարների վրա և խնդրում է, որ երեխաները խմբավորեն դրանք: Աշխատանքը կատարելուց հետո սովորողները ներկայացնում են իրենց աշխատանքները: Ուսուցիչն առաջարկում է կարդալ և պատասխանել նկարների տակ դրված հարցերին:
2. Հաջորդ առաջադրանքը կատարելիս սովորողներին հրահանգվում է նորից նայել այդ նկարները, բայց այս անգամ առանձնացնել և խմբավորել միայն վայրի և ընտանի կենդանիների նկարները՝ իրենց ծանոթ կենդանիների անունները գրելով աղյուսակում:
3. Աշխատանք դասագրքով՝ էջ 99-101

   ***«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս**1:*

4 Խոսելով ընտանի և վայրի կենդանիների մասին՝ սովորողները պետք է իմանան նաև, որ կան կենդանիների խմբեր, որոնցում կան միաժամանակ և՛ վայրի, և՛ ընտանի կենդանիներ: Այդ մասին իմանալը շատ կարևոր է, սովորողները պետք է հասկանան, որ դրանք որքան էլ իրարից տարբեր են, ունեն ընդհանուր բնութագրիչներ: Դրա համար ցույց ենք տալիս նաև նկարներ՝ տվյալ խմբին հատուկ բնութագրիչներով:

5. Տնային հանձնարարություն:
6. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 7 (39) - ԲՈՒՅՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նպատակը – Օգնել սովորողներին հասկանալու, որ բույսերը մարդու և կենդանիների համար հիմնական սնունդ են և ունեն կենսական նշանակություն: Մեկնաբանել, բացատրել, որ բույսերը «միջնորդ» են Արեգակի և կենդանի մարմինների միջև: Օգնել, որ սովորողները կարողանան ինքնուրույն դասակարգել բուսակեր և գիշատիչ կենդանիները:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Կ4ա Բնութագրել, օրինակներ բերելով, բույսերը՝ որպես մարդու և կենդանիների հիմնական սնունդ և կենսական նշանակության ունեցող պարագաների աղբյուր:

Ընթացքը

1. Դասը սկսել հարցերով՝ վեր հանելով երեխաների գիտելիքը սննդի մասին. ինչով են սնվում մարդիկ և կենդանիները, գիտեն արդյոք, թե որտեղից են սնունդ ստանում մարդիկ և կենդանիները:

Այնուհետև առաջարկում է նայել նկարները և գծով միացնել աջ և ձախ սյունակների նկարները՝ պարզելով, թե ինչով են սնվում կենդանի բնության տարրերը: Հնարավոր է, որ սովորողները մի կենդանուն միացնեն մի քանի ուտելիք: Կարևոր է, որ նրանք հասկանան՝ կենդանիները միայն բուսակեր կամ կենդանակեր չեն: Այս դասն առանձնահատուկ է նրանով, որ ողջ դասի ընթացքում պետք է անդրադարձ կատարվի «**Օրինաչափություններ**», «**Պատճառ և հետևանք**», «**Էներգիա և նյութ**», «**Կառուցվածք և գործառույթ**» խաչվող հասկացություններին:

2. Այս առաջադրանքով ուսուցիչը պետք է աշակերտներին բացատրի, մեկնաբանի, որ բույսը նույնպես կենդանի օրգանիզմ է և սնվելու կարիք ունի: Դրա համար նախ պետք է աշակերտներին հիշեցնել բույսերի կառուցվածքը, հետո բացատրել, թե բույսի յուրաքանչյուր մաս ինչ դերակատարում ունի սնունդ ստեղծելու գործընթացում:

3. Ուսուցիչն առաջարկում է կարդալ էջում տեղադրված նյութը, որից հետո պետք է մեկ անգամ ևս բացատրել *սննդառություն, օրգանիզմ, բուսակեր, գիշատիչ, դիակեր* բառերի իմաստները (միջառարկայական կապ **Մայրենիի** հետ):

4. Այս առաջադրանքը գիտելիքը ամրապնդելու համար է, ուսուցիչը կարող է ինքնուրույն ավելացնել նկարների քանակը: Տրամադրում է ժամանակ, որից հետո սովորողները կատարում և ներկայացնում են առաջադրանքները՝ մեկնաբանելով:

5. Դասի վերջում կան երկու փոքրիկ հղումներ՝ «Գիտե՞ք, որ…», որոնց նպատակն է ընդլայնել աշակերտների ճանաչողական գիտելիքը: Այս դասը ապահովում է կայուն անցում «Բնագիտություն» առարկայի համար (6-րդ դասարան):

6. Տնային աշխատանք:
7. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 8 (40) - ԱՆԿԵՆԴԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Նպատակը – Օգնել, որ սովորողները հասկանան և կարևորեն անկենդան բնությունը որպես կենդանի բնության ապրելու միջավայր:

Վերջնարդյունքներ

*2Շ.Բ.Բ.Ա2 **Բնութագրել և նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանի-ների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր**:*

Ընթացքը

1. Ուսուցիչն առաջարկում է նայել նկարները և առանձնացնել միայն անկենդան բնության մարմինները՝ նպատակ ունենալով հիշեցնել աշակերտներին անկենդան բնության հատկանիշները: Այնուհետև հարցերի միջոցով փորձում է պարզել, թե որտեղ են ապրում կենդանիները, բույսերը, ինչեր են անհրաժեշտ դրանց ապրելու համար:
2. Այս առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է դուրս գալ բակ, կատարել դիտումներ և գրառել, թե անկենդան բնության մարմիններն ինչպես են կապվում կենդանի բնության հետ: Անդրադարձ «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացությանը:
3. Հաջորդ առաջադրանքը գործնական է և շատ հետաքրքիր: Ուսուցիչը առաջար-կում է նայել նկարները և գծով միացնել աջ և ձախ սյունակների նկարները՝ գտնելով, թե որը ինչ միջավայրում է ապրում:
4. Ուսուցիչն առաջարկում է նայել նկարները, որոշել, թե որ կենդանին որտեղ է ապրում, ինչ միջավայրում: Անդրադարձ «**Օրինաչափություններ**», «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացություններին:
5. Այնուհետև կարդում են փոքրիկ տեքստը, բերում համապատասխան օրինակ ներ:
6. Տնային աշխատանք:
7. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 9 (41) – ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Նպատակը – Օգնել, որ սովորողները հասկանան և կարողանան բացատրել, թե որքանով է տվյալ միջավայրը համապատասխան կամ անհամապատասխան տարբեր բույսերի, կենդանիների համար: Նպաստել, որ սովորողները ձևավորեն համապատասխան բառապաշար:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Ա2ա Ներկայացնել, թե որքանով է տվյալ միջավայրը համապատասխան կամ անհամապատասխան տարբեր բույսերի, կենդանիների համար:

Անհրաժեշտ պարագաներ

Չկան

Ընթացքը

1. Ուսուցիչը դասը սկսում է՝ առաջարկելով աշակերտներին նայել նկարները և թվել առնվազն մեկ կենդանի կամ բույս, որոնք կարող են ապրել այդ միջավայրերում (մեկնաբանելով, բացատրելով):
2. Հարցադրումներից հետո ուսուցիչն առաջարկում է կարդալ էջի նյութը: Կարևոր է, որ աշակերտները հասկանան՝ միջավայրը պիտի լինի նպաստավոր, այնպիսին, որ ապահովի բույսերի և կենդանիների կենսունակությունը՝ օրգանիզմը հարմարեցնելով միջավայրի պայմաններին:
3. Այս առաջադրանքը կարևոր է նրանով, որ աշակերտները իմանան և կարողանան մեկնաբանել, բացատրել, թե որ կենդանի օրգանիզմը ինչպես է հարմարվել տվյալ միջավայրին: Հնարավոր է, որ սովորողները չկարողանան հիմնավոր բացատրել այդ երևույթը, դրա համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը տա լրացուցիչ բացատրություններ: Օրինակ՝ կակտուսը աճում է անապատում, նրա տերևները ձևափոխվել են փշերի, որպեսզի քիչ ջուր գոլորշիացնեն, կամ թռչուններն ունեն փետուրներ, որ կարողանան ստեղծել մեծ մակերես թռչելու համար և այլն: Անդրադարձ «**Պատճառ և հետևանք**» **և** «**Օրինաչափություններ**» «**Կառուցվածք և գործառույթ**» խաչվող հասկացություններին:
4. Ամփոփիչ վարժություն է, որը կօգնի համակարգել ստացած գիտելիքը, սովորողները կկարողանան հիմնավորել իրենց ասածը:
5. Տնային աշխատանք:
6. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 10 (42) – ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

Նպատակը - Ձևավորել ճանաչողություն Երկրի մակերևույթի որոշ ձևերի մասին, բնորոշել, նկարագրել շրջապատի ռելիեֆը:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Ա1 Տարբերակել Երկրի մակերևույթի ռելիեֆի որոշ ձևեր՝ լեռներ, հարթավայրեր:

Ընթացքը

Դասը սկսել մակերևույթ բառի իմաստային բացատրությամբ (միջառարկայական կապ **մաթեմատիկայի** հետ): Այնուհետև հարցերի օգնությամբ ճշտել երեխաների նախագիտելիքը Երկրի մակերևույթի մասին:

1. Ուսուցիչը առաջարկում է կարդալ էջի փոքրիկ բացատրությունը՝ գաղափար տալով ռելիեֆի մասին, ասելով, որ Երկրի մակերևույթը բազմազան է՝ և՛ հարթ է, և՛ անհարթ:
2. Պետք է նայել առաջադրանքի նկարները, նկարագրել լեռների և հարթավայրերի տարբերությունները:
3. Ուսուցիչը առաջարկում է դուրս գալ բակ, նայել շուրջը և միասին պարզել, թե ինչպիսին է իրենց տարածքի մակերևույթը՝ հա՞րթ է, թե՞ անհարթ, ի՞նչ բույսեր, կենդանիներ կան այդ տարածքում:
4. Հաջորդ առաջադրանքում նույնպես նկարներ են, որոնք պատմում են լեռնային, հարթավայրային, ջրային, անապատային տարածքների կենդանիների մասին: Ուսուցիչը կարող է օգտագործել նաև այլ նկարներ: Կարևոր է, որ երեխաները հասկանան, որ տեղանքի փոփոխությունների պատճառով, փոխվում են նաև այդ տեղանքների բույսերն ու կենդանիները: Կարևոր է մեկնաբանել, բացատրել, որ բնական միջավայրը պայմանավորում է բուսական և կենդանական աշխարհը: Անդրադարձ «**Օրինաչափություններ**» և « **Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացություններին:
5. Ուսուցիչը բացատրում և մեկնաբանում է, որ ջուրը նույնպես Երկրի մակերևույթի մի մասն է կազմում: Առաջարկում է նայել նկարները, պատմել, թե ինչպիսի բույսեր և կենդանիներ գիտեն, որ ապրում են ջրերում:
6. Տնային աշխատանք:
7. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 11 (43) – ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՄԻՍՆԵՐԸ

Նպատակը – Օգնել դիտարկելու բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները, թվարկել տարվա եղանակները՝ ըստ հերթականության և դրանց ամիսները: Նպաստել, որ երեխաները կարողանան դրսևորել եղանակին համապատասխան վարքագիծ:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Փ1 Դիտարկել և նկարագրել, թե ինչպես է փոփոխվում բնությունը տարվա եղանակներին, թվարկել տարվա եղանակները և ամիսները՝ ըստ հերթականության:

2Շ.Բ.Բ.Փ1բ Բնութագրել եղանակը ցանկացած պահի, դրսևորել եղանակին համապատասխան վարքագիծ:

Ընթացքը

Այս թեման սովորողներն ուսումնասիրում են դեռևս մանկապարտեզում, երեխաները դեռ փոքրուց սովորում են, առնչվում եղանակի փոփոխություններին:

1. Դասը սկսել հարցերով՝ պարզելով, թե ինչ գիտեն երեխաները տարվա եղանակների, ամիսների մասին: Այնուհետև առաջարկում է նայել նկարները՝ յուրաքանչյուրի տակ գրելով եղանակի անունը: Այս աշխատանքին հաջորդում են հարցերն ու քննարկումը:
2. Ուսուցիչն առաջարկում է կարդալ փոքրիկ բացատրությունը եղանակի փոփոխության մասին:
3. Զվարճացնող, թարմացնող վարժություն է, աշակերտները պետք է գտնեն հանելուկների պատասխանները և նկարեն իրենց աշխատանքային տետրերում:
4. Խաղ – վարժանք, որը կօգնի սովորողներին մտապահել տարվա ամիսները: Ուսուցիչը արտասանում է տողերը, իսկ աշակերտները դուրս են գալիս շարքից և խմբվում այն անկյունում, որտեղ գրված է իրենց ծննդյան ամսվա անունը:
5. Տնային աշխատանք - https://www.youtube.com/watch?v=39kXlYVaLqw
6. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 12 (44) – ԲՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակը - Նկարագրել տարվա տարբեր եղանակներին մարդկանց, բույսերի, կենդանիների կյանքում կատարվող փոփոխությունները, իմանալ, որ կան բույսերի և կենդանիների որոշ վերացած և վտանգված տեսակներ (Կարմիր գրքի մասին):

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Փ2.3 ***Նկարագրել փոփոխությունները բնության մեջ, պարզ բացատրություններ տալ՝ ինչով է պայմանավորված բնության վտանգված լինելը, նշել բույսերի և կենդանիների որոշ վերացած և վտանգված տեսակներ նաև մեր բնաշխարհից (Կարմիր գրքի մասին):***

2Շ.Բ.Բ.Փ1ա ***Դիտարկել և նկարագրել, թե ինչպես է փոփոխվում մարդկանց, բույսերի ու կենդանիների կյանքը տարվա տարբեր եղանակներին:***

Ընթացքը

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-րդ դասարանի գործող դասագրքերի՝
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1
թեմա** 6, **դաս** 7, **դաս** 12, **էջ** 103- –108-**ի նյութերը
***«Ես և շրջակա աշխարհը» Ա. Հովսեփյան, Ա. Կարապետյան, Ն. Տողանյան և այլք մաս 1, դաս** 23, **էջ** 90 – 91:*

1. Դասը կարելի է սկսել խթանող հարցերի օգնությամբ: Հնարավորություն տալ, որ աշակերտները խոսեն, պատմեն իրենց իմացածի մասին:
   Հնարավոր է, որ վերջին հարցին աշակերտները չկարողանան տալ լիարժեք պատասխան, դրա համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը կարդա և պարզ բացարություն տա, թե ինչ է եղանակը:
2. Ուսուցիչն առաջարկում է նայել նկարները և պատմել կատարված փոփոխությունների մասին: Կարևոր է, որ սովորողները հասկանան, մեկնաբանեն, թե ինչպես է բնությունը փոխվում, ինչ է կատարվում, ըստ այդ փոփոխության՝ ինչպես են մարդը, կենդանիները, բույսերը հարմարվում: Անդրադարձ «**Օրինաչափություններ**», «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացություններին:
3. Հետաքրքիր վարժություն է, որ ապահովում է միջառարկայական կապ **Մայրենիի** և **Մաթեմատիկայի** (աշխատանք աղյուսակներով) հետ, որը կօգնի հասկանալու, թե տարվա որ եղանակին ինչ գործեր ենք կատարում:

4. Ստեղծագործական բնույթի հետաքրքիր աշխատանք է, որը հանձնարարում է ուսուցիչը կատարել, որպեսզի երեխաներն ամրապնդեն բնության հետ կատարվող փոփոխությունները տարվա տարբեր եղանակներին: Ապահովում է միջառարկայան կապ **Արվեստի** հետ: Ուսուցիչն առաջարկում է տարվա յուրաքանչյուր եղանակի դիմաց գրել համապատասխան բառերն ու բառակապակցությունները՝ ամրապնդելով տվյալ եղանակին հատուկ բառապաշարը (միջառարկայական կապ **Մայրենիի** հետ):
5. Ինքնուրույն ստեղծագործական աշխատանք - Ուսուցիչը բաժանում է ծառի պատկերով նկարը և առաջարկում է նույն ծառի վրա ցույց տալ տարվա եղանակները՝ ներկելով ինքնուրույն:
6. Տնային աշխատանք - https://www.youtube.com/watch?v=YM6nMQbcKEk
7. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 13 (45) – ԲՆՈՒԹՅԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԴԵՐԸ ԴՐԱՆՈՒՄ

Նպատակը - Օգնել գիտակցելու բնության մեջ տեղի ունեցող բնական և մարդու գործունեության հետևանքով տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև մարդու ներգործության բացասական հետևանքները: Նպաստել պատասխանատու վարքագծի ձևավորմանը:

Վերջնարդյունքներ

2Շ.Բ.Բ.Փ2 ***Բացատրել, թե ինչ դեր ունի մարդը բնության վատթարացման գործում, մեկնաբանել բնության պահպանության և խնայող վերաբերմունքի անհրաժեշտությունը:***

Ընթացքը

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-րդ դասարանի գործող դասագրքերի՝
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս1,
***թեմա** 6, **դաս** 13, **էջ** 103-108-**ի նյութերը**:*

Դասը սկսել հարցերով՝ պարզելով, թե ինչ գիտեն աշակերտները բնության մեջ մարդու դերակատարման մասին:

1. Խաղանք միասին - «Ինձ էլ տեղ տվեք»:

Ուսուցիչը նախապես դասարանի ազատ տարածքում միմյանց մեջ մեծից փոքր 3 շրջան է գծում: Երեխաները տեղ են գրավում այդ տարածքում՝ պատկերացնելով, որ տարածքը Երկիրն է, իսկ իրենք՝ Երկիրը բնակեցնող կենդանիները: Ուսուցիչն ասում է, որ առաջին շրջանի տարածքում պետք է բնակավայրեր կառուցվեն, և հրահանգ է տալիս, որ այն «բնակեցրած» «կենդանիները» ազատեն տարածքը՝ իրար սեղմվելով և տեղավորվելով մյուս երկու շրջաններում: Այնուհետև ուսուցիչը տալիս է երկրորդ հրահանգը, երկրորդ շրջանը տրամադրվել է ճանապարհների և գործարանների շինարարությանը: Այդ տարածքը նույնպես հարկավոր է ազատել: Փաստորեն երեխաները իրար սեղմվելով մի կերպ տեղավորվում են երրորդ շրջանում կամ բոլորովին դուրս են մղվում տարածքից: Վարժությունը պետք է ամփոփել հարցերով: Կարևոր է, որ երեխաները հասկանան, թե ինչ բացասական ազդեցություն է թողնում մարդը բնության վրա: Անդրադարձ «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացությանը: Վարժությունը խթանում է երևակայությունը, վերլուծական մտածողությունը, ապահովում է ներառարկայական կապ «Արարք և հետևանք» ենթաթեմայի հետ:

2. Ուսուցիչն առաջարկում է նայել նկարները և դրանք բաժանել երկու խմբի՝ ըստ Երկրի վրա ներգործության աստիճանի: Աշակերտները կատարում են հանձնարարությունը և ներկայացնելիս մեկնաբանում: Կարևոր է, որ նրանք հասկանան, թե որ դեպքում ինչ ազդեցություն կունենա Երկրի վրա մարդու գործունեությունը:
3. Հետաքրքիր առաջադրանք է, որն աշակերտներին հնարավորություն է տալիս քննադատաբար մտածելու, ելք փնտրելու: Ուսուցիչն առաջարկում է նայել նկարները, մեկնաբանել, բացատրել, թե ինչ են տեսնում, ինչ դեր ունի մարդը այդպիսի իրավիճակների առաջացման գործում: Պետք է անդրադարձ կատարել «**Մասշտաբ**, **համամասնություն և քանակ**» խաչվող հասկացությանը:
4. Ուսուցիչը գրատախտակին փակցնում է նախապես վերնագրված «Խնայենք բնությունը» պաստառը, առաջարկում է աշակերտներին վերափոխել նկարներն այնպես, ինչպես իրենք կցանկանային տեսնել բնությունը: Աշխատանքը կատարելուց հետո, երեխաներն իրենց նկարները պետք է փակցնեն «Խնայենք բնությունը» վերնագրով պաստառի վրա:
5. Տնային աշխատանք:
6. Ձևավորող գնահատում: